ԳԻՇԵՐԱՅԻՆ ԵՐԳ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

I

Խորին գիշեր էր, և արաբ աշխարհ
Ծածկուած էր անդորր, լրիկ խաւարով,
Եւ խաղաղ քընում նիրհում էր անտառ,
Ուժասպառ անտառն, հանգիստ անվրդով։
Ցանկարծ հեռու անտառային խորքերից
Լրռութեան մէջ բլբուլի ձայն բարձրացաւ,
Շեշտակի ձայն, մի դայլայլիկ ոգելից,
Եւ էլ իսկոյն մարեցաւ։
Նորից հընչեց... Ինչպէս վրտակ կարկաջուն,
Գեղգեղելով թափւում էին հընչիւններն,
Որ դիւթելով շարժում էին իմ հոգում
Բոլոր դողդոջ իւր լարերն։

Բայց ահա զարմանք։ Նա, որի վերան
Բախտի արև է մըշտապէս փայլել,
Որ արթուն թէ քուն՝ ծաղկաբոյր գարնան
Վարդեայ փընջեր է միմիայն տեսել,
Այնպէս էր կարծում թէ սիրահարած
Բլբուլիկն է այն սիրուհու գըրկում
Մոռացած աշխարհ, անհոգ, ըզմայլուած
Երջանիկ սիրոյ երդեր նըւագում։

Բայց նա...
Նա, որ վերայ խըռովւած աշխարհ
Միշտ անհաշտ և խէթ աչքով է նայել,
Որ մըշտահալւած, միայնակ, թըշւառ
Պայծառ, երջանիկ մի օր չէ տեսել,
Մըրմընջում էր նա.
Ո՛չ, ո՛չ, երգ չէ այն. այլ կոծ, հեկեկանք.
Լըքեալ սոխակը ողբում է նորան,
Որից յետ այլ ևըս չունի գին իւր կեանք,
Որից զըրկւած է այժըմ յաւիտեան։
Ո՛չ. սիրոյ ձայնը չէ՛ր կարող հընչել
Այնքան տըխրագին,
Սիրոյ նըւագից չէր կարող լըցւել
Այսպէս իմ հոգին...

Մոսկւա. 1888 Թ. հոկտեմբերի 2.

II

Երևացիր, օ՛ մուսա, և իմ պաղած արիւնն
Դու ջերմացրու կըրկին քո երկնային շընչով.
Այս իմ մըթին և նեղ և աղքատիկ անկիւնն
Լուսաւորիր դարձեալ պայծառ ու ջերմ լուսով։
Թող ես ըզգամ դարձեալ, որ դեռ ապրում եմ ես,
Որ էլ թըմրում չեմ ես, ինչպէս դալուկ մի բոյս
Մի գետնափոր խրցում... օ՛ աղաչում եմ ես
Ինձ սուղարկիր, օ՛ մուսա, հուր, եռանդ, վառ յոյս։
Ինձ վերըստին զինիր ճըշմարտութեան խօսքով
Եւ հընոցի միջով դու անցկացրու Նորան.
Թող իմ բարբառն դառնայ, ինչպէս նիզակ, կորով,
Արդարութեան համար երկաթապատ վահան։

Նորից խաօս կեանքում,—և խառնուեցին կրկին
Անմեղութիւն, կեղծիք, բարի և չար տարրեր.
Եւ կըրքերի ուժեղ, գոռ յորձանքի միջին
Շըփոթուեցին դարձեալ հառաչ և յիշողներ...
Թող դիմակներն նեխուած և փառամոլ մարդկանց
Ես պատառեմ ձըգեմ ժողովրդի աչքին,
Որ նա դատէ նոցա և դըրոշմով անանց
Անարգ սև մուր կընքէ նոցա զազիր դէմքին։
Թող բարձրաձայն գոչեմ—և արձագանք ինձ տան
Երիտասարդ, ազնիւ, առողջ ու թարմ ոյժեր.
Դատաւորի ձայնով նոքա վրճիռ կարդան,
Եւ սարսափեն դըծուած և փառամոլ սըրտեր...
Դէ՛, շո՛ւտ արա, օ՛ մուսա, թըռիր դէպ ինձ շուտով
Եւ իմ հոգին վառիր դու երկնային կայծով։

Թիֆլիս. 1891 թ. օգոստոս 14.